

մանայ անոնց բոլորանուէր գոհողութեան, տոկունութեան և յարատեւութեան վրայ, որոնք արժանի են արձանագրուելու: Իսկ իրենց յաջողութեան չափը, իրենց ճաշակին աստիճանը, այդ ալ բաղդատմամբ իրենց միջավայրին, իրապէս Հայ գեղարուեստասիրական յաղթանակ կրնանք նկատել:

Իսկ առ այժմ լըջօրէն, առանց մեղմացուցիչ պարագաները նկատի առնելու, եթէ դատենք Հայ սպազրական փայտափորագրական մանրանկարչութեան արուեստը, հոս տրուած նմոյշներուն վրայ յեցած՝ կրնանք ըսել որ ան եղած է առանձնապէս հետեւողական Էւրոպական արուեստին ի մասնաւորի Ոսկանի միջոցով հայոց մէջ տարածուած հոլանտացի Christoffel van Sichem (երէց) և անոր շարադրածներուն, առանց հասնելու անոր արհեստին նրբութեան: Ստեղծագործական ոչինչ ունեցած է բաց ի քանի մը հազիւ նկատելի արեւելականացման փորձերէ: Իսկ Հայ մանրանկարչական ար-

ուեստին հետեւելու հեռատեսութիւնն իսկ չէ ունեցած, ասով ան գոնէ ազգայնական հիմերու վրայ ալ աւելի նկատելի կ'ըլլար քննադատներուն առջեւ: Անոնց Հայ սպազրական փայտափորագրիչ մանրանկարիչները շատ աւելի արուեստագէտ պիտի ըլլային, եթէ հետեւութեան համար իրենց նախագաղափար ընտրէին Հոմիլացին, Տարօնեցին կամ Ռօսլին, Թորոսներու մանրանկարներուն կամ Սկեռայ, Գրազարկի, Հաղբատի, Բաղէշի, Երզնկայի, կամ գոնէ նոյն իսկ մեր փորագրիչներուն զրեթէ ժամանակակից և հազիւ դար մը առաջ գործող վանայ դպրոցին, որուն մինչեւ 1690ական շրջանի արտադրութեանց հետաքրքրական նմոյշներն հասած են մեզի: Եթէ միայն անոնք զարդածներուն հետ հայ ձեռագիրներու մանրանկարներն ալ օրինակէին իրենց փորագրութեանց համար, անտարակոյս իրենց արժէքը շատ աւելի մեծ կ'ըլլար եթէ նոյն իսկ անոնք ինքնուրոյն հեղինակութիւններ չունենային:

